

Կեսարացի վաճառականը կ'ըսէ իր քով պաշտօնեայ առած բազմատաղանդին.

-Նայէ, որ ազատ ժամերդ պարապ չանցընես ու քանի մը կարելոր արհեստներ ալ սորվիս, օրինակ՝ կօշիկի նորոգութիւն, արդուկ, մազ կտրել: Մարզանք ալ ըրէ՝ ուժեղնալու համար:

Օր մըն ալ կ'ըսէ իր գրագիրին.

-Սա քանի մը գորգերը շալկէ ու Սահաթճեանին խանութը տար:

Պաշտօնեան փորձելէ վերջ, կուգայ ու կ'ըսէ.

-Աղա, գորգերը տասներկու հատ են, տեղէն վերցնել անկարելի եղաւ: Պարոն Սահաթճեանին խանութն ալ հեռու է: Դժբախտաբար ոյժես, կարողութեսնես վեր է այդ գորգերը շալկել ու տանիլ:

Կեսարացին պահ մը կը նայի իր գրագրին աչքերուն խորունկը ու կ'ըսէ.

-Քանի՞ քիլօ կուգան այդ գորգերը.

-Չեմ գիտեր... սակայն կը կարծեմ, որ հարիւր քիլօ մը ըլլալու են...

-Ծօ՛, եթէ հիմա քեզի հարիւր քիլօ ոսկի նուիրեմ, չե՞ս կրնար միկնել տունդ տանիլ: Կը տանիս չե՞, ու փետուրի պէս առած կը տանիս: Ոչ թէ կը տանիս, այլ կը թռցնես: Ծանրութիւնը միեւնոյնն է, ինչո՞ւ ոսկին պիտի տանիս եղեր ու գորգերը պիտի չկրնաս տանիլ: Շո՛ւտ, շալկէ՛, եալլա՛հ...

*

Հակառակ իր ունեցած առեւտրական անգերազանցելի հանճարին՝ Կեսարացին երբեք գործ մը չի հիմներ միս միւսակը: Անպատճառ կ'աշխատի ընկերովի: Իր գործի ընկերն է սատանան, որ իրմէ ո՛չ հաց կ'ուզէ, ո՛չ ալ ջուր կը պահանջէ:

Ան սատանային հետ կ'ըլլայ ընկեր-դաշնակից ու մտիկ կ'ընէ անոր խօսքը:

Երբ կը մտածէ, երբ կը հաշուէ, երբ կը սակարկէ, երբ կ'աշխատցնէ, երբ կուտայ կամ կ'ամնէ, սատանան, անտեսանելի, միշտ քովն է ու կը կրկնէ.